



Փավստոս Բուզանդի 1/3
0010 Երևան, Հայաստան
Հեռ., ֆաքս՝ +37410 529 868,
560 000

ՄԻՆՏ ԼԱՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Նախընտրական քարոզարշավի տեքստը՝

“Ուշադրություն.

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19 հոդվածի պահանջների Հայ Էֆ Էմ ռադիոկայանը սահմանում է եթերաժամի մեկ րոպեի գինը 2700 ՀՀ դրամ ներառյալ ավելացված արժեքի հարկ, որը մնալու է անփոփոխ մինչև նախընտրական քարոզչության ավարտը:

Ապրիլի 8-ից մայիսի 4-ը ներառյալ Հայ Էֆ Էմ ռադիոկայանը թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար 8:30-ից մինչև 20:30 յուրաքանչյուր ժամի կեսին տրամադրելու է հնարավորություն տեղադրել մինչև 1 րոպե տևողությամբ գովազդային հոլովակ: Հոլովակների ընդհանուր տևողությունը մեկ օրվա ընթացքում չպետք է գերազանցի 12 րոպեն: Մայիսի 1-4 ներառյալ 18:30 և 20:30 ռադիոկայանը տրամադրելու է 15 րոպե տևողությամբ նախընտրական քարոզչությանը վերաբերող 2-ական եթերաժամ:

Թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից միջոցառումներ չկազմակերպելը կամ այդ միջոցառումների մասին տեղեկատվության բացակայությունը հիմք չէ զանգվածային լրատվության միջոցի համար ընտրությունների մյուս մասնակիցների քարոզարշավի մասին տեղեկություններ չհրապարակելու համար:”